



**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱԿԱՆ ԿՈՉԸ
ԼԻՑԱՆԱՆԻ ԿԱՐԻՋԱՎՈՐ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**ՀԱՅՐԱԿԱՆ ԿՈՉ ՄԵՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ***

Խոր վիշտ կը պատճառէ Մեզի, ողբերգական կացութիւնը որուն մատնուած է եղբայրական Լիբանանի համայն բնակչութիւնը, իբրեւ հետեւանքներքին անհասկացողութեանց:

Մեր ամենօրեայ աղօթքն ու մաղթանքն է որ Լիբանանցի ժողովուրդի բոլոր համայնքներու միջև անյապաղ վերահաստատուի արդար խաղաղութիւն մը և համերաշխ գործակցութիւն մը ի շահ և յերջանկութիւն ամբողջ Լիբանանի, երկիր մը որ արաբ ազգին յատուկ մարդասիրութեամբ ու հայասիրութեամբ ասպնջականութիւն շնորհած է մեր ազգի բազմահազար դժբախտ տարագիներուն առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ, որուն համար յաւէտ երախտապարտ պիտի մնան մեր եկեղեցին ու մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփիտա աշխարհի:

* 1975 թվականի նոյեմբերի 3-ին Մայր Աթոռում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց խորհրդակցություն, որտեղ բննարկվեց Լիբանանում ամիսներից ի վեր շարունակվող ներքին քաղաքացիական կոիվների հետևանքով թշվառության մատնված հայերին նյութական օգնություն կազմակերպելու հարցը և բնորոշվեց համապատասխան որոշում:

Սույն խորհրդակցությանը մասնակցում էին Մայր Աթոռի կողմից՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն ու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պետհամալ-

տարանի դասախոս դոցենտ. Հովհաննես Թովուզյանը:

Խորհրդակցությանը մասնակցում էին նաև ուսուսուրարքար մայր հայրենիքում գտնվող Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի խմբագիր պրն. Գերսամ Անարունյանը և նույն քաղաքի «Արարատ» օրաթերթի խմբագիր պրն. Ժիրայր Նաչիրին:

Մտքերի փոխանակումից հետո որոշվեց՝

ա) Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր հովանավորության ներքո կազմակերպել հանգանակություն՝ ափսոսաբան նյութապես բարեկեցիկ սրայմաններում ապրող հայկական շրջանակներից:

Մեր տագնապեալ լիբանանահայ զաւակներուն օգնութեան հասնելու նպատակաւ և ընդառաջելով լիբանանահայ տարբեր կազմակերպութեանց պատասխանատու ներկայացուցիչներու դիմումներուն, առաջադրած ենք կազմութիւնը «Օգնութեան լանձնախումբ»-ի մը, բաղկացած եօթը լիբանանահայ ծանօթ ազգայիններէ, նախագահութեան ներքոյ տիար Յովհաննէս Գասարեանի, որ պարբերաբար ստանալով նիւթական յատկացումներ, պիտի կարողանայ կազմակերպել օգնութեան գործը այն լիբանանահայերուն, որոնք կարօտ են նիւթական օժանդակութեան, ապահովելու համար իրենց ընտանիքին անհրաժեշտ սննդամթերքը:

Այսու Մենք, եղբայրական սիրով կը դիմենք Լիբանանի հայ կրօնական յարանուանութեանց պետերուն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին, կաթողիկէ հայոց Ս. Իգնատիոս Պաթանեան Պատրիարքին և հայ աւետարանական համայնքներու նախագահ վերապատուելի Յովհաննէս Ահարոնեանին, որ հաճին իրենց բարոյական հովանաւորութիւնը ընծայել վերոյիշեալ «Օգնութեան լանձնախումբ»-ին, որպէսզի ան առաւել արդիւնաւէտութեամբ կարողանայ անհրաժեշտ նպաստները բաշխել բոլոր լիբանանահայ կարօտեալներուն անխորի:

Սիրելի հաւատացեալներ Մեր,

Մեր հոգեւոր և բարոյական պարտքը կը նկատենք դիմել ձեզի բոլորիդ, որպէսզի օգնութեան ձեռք երկարէք ձեր հայ եղբայրներուն և քոյրերուն, որոնք այսօր Լիբանանի ափերուն, թշուառութեան մատնուած, կարօտեալ փնակի մէջ կը գտնուին:

Մեզի համար յոյժ մխիթարական է յուսալ թէ դուք, սիրելի զաւակներ Մեր, որ բարեկեցիկ պայմաններու մէջ կ'ապրիք ձեր բնակած երկիրներուն մէջ, սիրայօժար կերպով պիտի ընդառաջէք Ամենայն Հայոց Հայրապետի այս կոչին և պիտի փութաք ձեր դրամական նուէրները ընծայաբերել լիբանանահայ ձեր քոյրերու և եղբայրներու օգնութեան գործին:

բ) Նորին Սրբութեանը խնդրել՝ հայրապետական մի կոչով դիմել ափյուրքի հավատացյալ հայերին՝ շնչունելով կատարվելիք հանգանակության կարևոր նշանակությունը և մշել այդ հարցում լիբանանահայ երեք համայնքների կրոնական պետերի համագործակցության անհրաժեշտությունը:

Հանգանակված գումարներն ի պահ դնել շվեյցարական բանկում՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, և Նորին Սրբության հրամանով մաս առ մաս տեղափոխել Լիբանան:

Այս առթիվ հաստատել «Լիբանանահայ օգնության լանձնախումբ»՝ հետևյալ կազմով.

ա) Տիար Հովհաննէս Գասարեան (նախագահ).

բ) Պրոֆ. Բարունակ Թովմաշյան.

գ) Տիար Հարություն Շերեմյան.

դ) Դոկտ. Եղիա Գոնիպլյան.

ե) Դոկտ. Հարություն Լաչինյան.

զ) Դոկտ. Բաբկեն Մկրտչյան.

է) Մեթոք Նուբար Թուրսարգյան:

Սույն խորհրդակցության ավարտին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բացված հայտարարելիք լիբանանահայ կարոտյալ հայերին օգնության

ի նպատակաւ կատարվելիք հանգանակությունը՝ Մայր Աթոռի համեստ միջոցներից տրամադրելով այդ բարի նպատակի համար 20.000 (քսան հազար) դոլլարի մի գումար, որ արդեն փոխանցված է շվեյցարական դրամատուն՝ ծառայելու համար իր նպատակին:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում հրատարակելով նույններ 4 թվակիր հայրապետական սույն կոչը, վստահ ենք, որ ափյուրքի մեր հավատացյալ եղբայրներն ու քոյրերը, Մայր Աթոռի հարազատ բոլոր զավակները, հայկական կազմակերպություններն ու հայրենակցական, մշակութային բոլոր միությունները ջերմորեն և հալաբար կկատարեն իրենց եղբայրական պարտքը՝ շուտափույթ կերպով հասնելու համար լիբանանահայության կարիքներին:

Մեր բոլորի արտագին և բարի մաղթանքն է նաև, որ կարելի փութով վերահաստատվեն խաղաղությունն ու արդարությունը Լիբանանի այդ օրհնյալ հողի վրա, Լիբանանի եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առ այդ կանխա Մեր շնորհակալությունը կը յայտնենք նուիրատունե-
րուդ, բոլորիդ համար հայցելով երկնային օրհնություն:

Լիբանանի հայ կաթոնեալներու համար կատարուող դրամական ձեր
նուիրատությունները բարի եղէք սուսբել Մեր անունով գոհցեալական
«Union de Banques Suisses» դրամատան ի Ժնև, ուր Մենք բացած ենք
արդէն յատուկ հաշիւ այս նպատակաւ:

Որպէս բացում մեր կաթոնեալ զաւակներու օգնութեան ֆոնտին, Մայր
Աթոռս իր համեստ միջոցներէն կը տրամադրէ 20.000 տոլլարի գումար մը,
որ արդէն իսկ փոխանցուած է վերոյիշեալ դրամատանը, ծառայելու համար
իր նպատակին:

Թող Աստուած խաղաղութեան և արդարութեան, իր փրկարար լոյսը
կաթեցնէ լիբանանեան օրհնեալ երկրի վրայ և զօրավիզ դառնայ մեր
մահմետական ու քրիստոնեայ եղբայրներուն բոլոր, որպէսզի անոնք շու-
տով հասնին նաահանգիստը խաղաղութեան, փառք տալով միեւնոյն Աս-
տուծոյն, ստեղծիչը և բարեխնամող Հայրը բոլոր մարդոց, բոլոր ժողովուրդ-
ներուն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին,
4 նոյնբեր 1975 թ.

